ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան 18 նոյեմբերի 2026 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Դիլանյանի

Անդամակցությամբ՝ Ա. Վաղարշյանի

Հ. Հովակիմյանի

Քննության առնելով «Հին Էրիվան Հոլդինգ» ՍՊԸ անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «Հին Էրիվան Հոլդինգ» ՍՊԸ (այսուհետ՝ Դիմող, ներկայացուցիչ՝ փաստաբան Հայկ Ալումյան) անհատական դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2026 թվականի հոկտեմբերի 29-ին, որով Դիմողը խնդրել է.

««Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ ՀՕ-169 օրենքի (ընդունման ամսաթիվ՝ 03.04.2001թ., ուժի մեջ մտնելու ամսաթիվ՝ 18.08.2001թ., ներկայում գործում է) 52-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերը, հաշվի առնելով իրավակիրառ

պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող այնքանով, որքանով դրանք վերաբերում են սնանկության հետևանքով իրավաբանական անձի լուծարման մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա այդ իրավաբանական անձի լուծարման գրանցմանը»:

2. Ներկայացնելով թիվ ԵԿԴ/0090/04/13 սնանկության (նախկինում՝ քաղաքացիական) և թիվ ՎԴ/12837/05/21 վարչական գործերի դատավարական նախապատմությունները՝ Դիմողը նշում է, որ սնանկության հետևանքով լուծարված իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման գործընթացում ո՛չ սնանկության գործով կառավարիչը և ո՛չ էլ իրավաբանական անձի լուծարման պետական գրանցումն իրականացնող մարմինը չունեն պարտականություն և գործիքակազմ՝ պարզելու, թե արդյո՞ք առկա է իրավաբանական անձի մասնակցությամբ հարուցված և չավարտված դատական գործի կամ կատարողական վարույթի վերաբերյալ տեղեկատվություն: Ըստ Դիմողի՝ վերոնշյալն օրենսդրի վրիպման արդյունք չէ, այլ պայմանավորված է նրանով, որ վերջինիս տրամաբանությամբ սնանկության արդյունքում իրավաբանական անձի լուծարման վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանն ինքն է գնահատում բոլոր այն հետևանքները, որոնք կարող են առաջանալ նման դատական գործերի և կատարողական վարույթների առկայության արդյունքում, ինչպես նաև դրանց առկայության դեպքում որոշում է լուծարման գործընթացի վրա վերջիններիս ազդեցության հարցը:

Դիմողի պնդմամբ՝ վիճարկվող՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 52-րդ հոդվածի 1-ին մասի 5 և 6-րդ կետերով սահմանված դեպքերում օրենսդիրը պետական գրանցումն իրականացնող մարմնին արգելել է գրանցել սնանկության հետևանքով իրավաբանական անձանց լուծարումն այն դեպքում, երբ առկա են լուծարման մասին օրինական ուժի մեջ մտած դատական

ակտը և նույն օրենքի 50-րդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը: Այս առումով Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթները թույլ են տալիս չկիրառել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռից բխող հետևանքները: Մասնավորապես՝ ըստ Դիմողի՝ վիճարկվող դրույթներով նախատեսված են իրավաբանական անձի լուծարման գրանցման մերժման այնպիսի հիմքեր, որոնք որոշակի դեպքերում ուղղակիորեն բացառում են օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարումը:

Արդյունքում՝ Դիմողը եզրահանգում է, որ Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 5 և 6-րդ կետերը հակասում են Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին այնքանով, որքանով դրանք վերաբերում են նաև սնանկության հետևանքով իրավաբանական անձի լուծարման մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա այդ իրավաբանական անձի լուծարման գրանցման գործընթացին՝ լուծարման մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության պայմաններում՝ փաստացի թույլ տալով որոշակի դեպքերում չգրանցել իրավաբանական անձի լուծարումը:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքներից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, **ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև***

համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերոհիշյալ դրույթն ամրագրվել է նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով, որը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված* ***այլ դեպքերում****:*

Նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումներով գործի քննությունը, ի թիվս այլնի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ* ***անհատական դիմումն ակնհայտ անհիմն է****:*

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է, որ *«(…) անհատական դիմումների քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքերում,* ***երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է:***

(…) անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ,

դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:

Սահմանադրական դատարանը վերոնշյալ աշխատակարգային որոշմամբ նաև արձանագրել է, որ *«(…) դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե* ***իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր*** *(…)»:*

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը 2009 թվականի նոյեմբերի 24-ի ՍԴՈ-839 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ *եթե դիմողի կողմից չի հիմնավորվում վիճարկվող դրույթի և իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապը, ապա տվյալ դիմումն* ***ակնհայտ անհիմն է:***

Այս առումով Սահմանադրական դատարանի դատական կազմը հարկ է համարում փաստել, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիմնավորված լինելու պահանջը, համաձայն որի՝ դիմողը պետք է հիմնավորի, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքն է խախտվել, և ի՞նչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքի խախտման միջև, **չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության՝ առանց ներկայացնելու վիճարկվող օրինադրույթի և իր համապատասխան հիմնական իրավունքի և (կամ) ազատության ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի առկայության բավարար հիմնավորումներ:**

Սահմանադրական դատարանը 2022 թվականի հուլիսի 12-ի ՍԴԱՈ-126 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է. *«(…) անձը պետք է անհատական դիմումի շրջանակներում ուղղակիորեն մատնանշի և հիմնավորի վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կոնկրետ դրույթի և Սահմանադրության 2-րդ գլխում*

բովանդակվող իր հիմնական իրավունքի և/կամ ազատության ենթադրյալ հակասության անմիջական պատճառահետևանքային կապը: Այլ կերպ ասած՝ ***վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը պետք է ուղղակիորեն հանգեցնի Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտադրել, որ Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող սահմանադրահիրավական սկզբունքներին վիճարկվող իրավանորմերի հակասությունը սահմանադրահիրավական իմաստով չի կարող անհատական գանգատարկման առարկա դառնալ, եթե վերջնարդյունքում չի հանգեցնում անձի՝ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման»***:

Վերը ներկայացված դրույթներով ամրագրված կարգավորումները, Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերի հետ՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը հանգում է հետևյալ եզրակացության.

անհատական դիմումի շրջանակում նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը վիճարկելու պարագայում **անհրաժեշտ է բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, որ վիճարկվող դրույթը (տվյալ պարագայում՝ դրույթները, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը) հանգեցրել է (են) Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության խախտման, որը տվյալ պարագայում տեղի չի ունեցել:**

Մասնավորապես՝ Դիմողը սույն անհատական դիմումի շրջանակներում վիճարկում է Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 5 և 6-րդ կետերի (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության)՝ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանությունը, որի կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատական կազմը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ Դիմողը վկայակոչել է Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 5 և 6-րդ կետերի (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) հակասությունը Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ արդար դատաքննության հիմնական իրավունքին, սակայն **բավարար կերպով իրավաբանորեն չի հիմնավորել իր՝ տվյալ հոդվածով երաշխավորված հիմնական իրավունքի խախտման փաստը, հետևաբար և՝ վիճարկվող դրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) և համապատասխան հիմնական իրավունքի ենթադրյալ խախտման փաստի միջև պատճառահետևանքային կապի անմիջական առկայությունը:**

Փոխարենը Դիմողը սահմանափակվել է իր՝ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված հիմնական իրավունքի խախտման վերաբերյալ պնդումների պարզապես վկայակոչմամբ՝ բավարար կերպով իրավաբանորեն չհիմնավորելով իր կողմից վիճարկվող դրույթների (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) և նման խախտման ընդհանրությունը, դրանց միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայությունը՝ սույն կոնկրետ գործի հանգամանքների և առանձնահատկությունների հաշվառմամբ:

Այսպիսով, Սահմանադրական դատարանի դատական կազմը փաստում է, որ սույն դիմումով չի հիմնավորվում Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 5 և 6-րդ կետերի (իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության) հակասությունը Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասին:

Այսինքն՝ **սույն անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, ինչը գործի քննությունը մերժելու հիմք է:**

Ուստի՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը եզրահանգում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման**՝ Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա՝ **դիմումի ակնհայտ անհիմն լինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

«Հին Էրիվան Հոլդինգ» ՍՊԸ անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝ Ա. Դիլանյան

Անդամներ՝ Ա. Վաղարշյան

Հ. Հովակիմյան

18 նոյեմբերի 2026 թվականի
ՍԴԴԿՈ-102